ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մ. Բաղրամյան պող. 19, 0095, ք. Երևան
Հեռ.՝ + 374 10 529695

1/5278-2024
03.12.2024

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված Ազգային ժողովի 2025 թվականի կարիքների համար գրենական պիտույքների, գրասենյակային նյութերի և A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնման նպատակով 2024 թվականի նոյեմբերի 1-ին հայտարարված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 11 չափաբաժնին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԻԳ ՀՈՄ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Էլեկտրոնային աճուրդն ամփոփվել է 2024 թվականի նոյեմբերի 12-ին և Ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից համարվել է «ԲԻԳ ՀՈՄ» ՍՊԸ-ն: 2024 թվականի նոյեմբերի 20-ին հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին Համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԲԻԳ ՀՈՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սահմանված ժամկետում շտկումները կատարել է մասնակի, մասնավորապես՝ Հանձնաժողովն արձանագրել էր նաև, որ eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 11-րդ չափաբաժնի Համակարգին կից ներկայացված փաստաթղթում կատարվել է մասնակի շտկում, մասնավորապես «ապրանքային նշան» սյունակում նշվել է «CELLIO», իսկ «Տեխնիկական բնութագիր» սյունակում «COЮЗ» (տարբեր ապրանքային նշաններ, որից պարզ չէ, թե որն է մատակարարվելու)՝ նույն փոփոխությունը կատարվել է Համակարգում: Փաստաթղթում «արտադրողի անվանումը» սյունակը շտկվել է կազմակերպության կազմակերպաիրավական ձևը, իսկ համակարգում շտկում չի կատարվել, ինչով

պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

(...)

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները և այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետում նշված խախտում և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝ Պատվիրատուն գտնում է, որ ՀՀ ԱԺ

ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքում «ԲԻԳ ՀՈՄ» ՍՊԸ-ին անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Առդիր՝ 3 նիշք:

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ
1702930629

2024-12-06 17:43:16 GMT
Հավաստված է ԷԿԵՆԳ-ով

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատարող՝ Ռ. Հովհաննիսյան
Հեռ.՝ 011513435

անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեությունը հասցեն	Մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԲԻԳ ՀՈՄ» ՍՊԸ	01313649	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,Կոտրոնյան փ. 21/2, 43	«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ			ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/6 06.12.2024թ.